ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 34-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում կատարված կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության ելքի ինդեքսները հաստատելու, փաստաթղթաշրջանառության առանձնահատկությունները կանոնակարգելու մասին» թիվ 1-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 7-րդ կետից հանել «ՀՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ 1-ին գումարտակ 7/2» բառերը:

2) 10-րդ կետում «ՀՀ ոստիկանության ԵՔՎ պարեկապահակակետային ծառայության գունդ» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության ԵՔՎ հատուկ նշանակության գումարտակ» բառերով:

3) Լրացնել նոր կետերով հետևյալ խմբագրությամբ.

«90.ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն 90»,

«91.ՀՀ ոստիկանության պարեկային ծառայություն 91»,

«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդ 91/1»:

2.Հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության գործարկման պահից:

3.Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին /աշխատողներին/:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«01» ----07----2021թ.

ք.Երևան